

Գ Ա Ն Գ Ա Տ

(Էտիլո)

Իմ ընկեր Արմենակը հիւանդ էր. թոքախտ ունէր: Արիւնաքամ, թուլացած՝ նա պառկած էր անկողնում ու մաքառում էր մահուան դէմ: Թոքախտը խեղդում էր նրան, նա մեռնում էր:

Սենեակը ցուրտ էր, օդը խեղդուկ, ճնշող: Մոմի փոքրիկ կտորը մեղմութեամբ այրւում էր և իր թուլ, երերուն ու վատտ լոյսը թափում սեղանի, գրքերի, երկու աթոռի վրայ... Իսկ դուրսը գիշերային թանձր խաւարի մէջ իր մոլեգին ցուրտ երկըն էր սուլում ցաւազար աշունը: Քամին աղմկւում ու դռում էր, թւում էր, թէ նա պատռելով մութ երկնքի կուրծքը՝ դուրս էր թռչում ինչ որ անտակ, ցուրտ անդունդներէն ու թափահարելով իր սև թևերը՝ սլանում էր, գահավիժւում ցած, զարնւում սալայատակի քարերին, տան պատերին, թևերը կտորատելով ու վիրաւոր գազանի նման մռնչում էր, օդը լըցնում խուլ, սառցնող հառաչանքներով: Նա մորմուքում էր, զանգատւում, ապա լռում ու խաղաղւում. և միայն անձրևի կաթիլները ձեծում ու ձեծում էին պատուհանի ապակին, կարծես ասում լինէին.—ցուրտ է... ցուրտ...

Ընկերս հանգիստ էր, նա քնած էր: Ես նստած էի անկողնի մօտ ու մտածում էի: Տխուր ու սև էին մտքերս: Երբեմն մարդ այնպիսի տրամադրութիւն է ունենում, որ ամենասովորական բաները խորթ, անսովոր, անձանօթ են թւում: Այդպէս էի տրամադրուած և՛ ես: Ես մտածում էի.—ընկերս մեռնում է... ուրեմն շատ մարդիկ, որոնց ես ճանաչում եմ, որոնց հետ ես միշտ խօսում եմ, ամենքը պէտք է մեռնեն: Եւ նրանք, որոնք այժմ անցնում են փողոցով ու անհոգ եր-

գում են, որոնց ես չեմ տեսնում, որոնց չեմ ճանաչում—նրանք էլ կը մեռնեն... ես էլ պէտք է սկսեմ...

Ու սիրտս սեղմում էր... ես չէի կարողանում հաշտուել այդ մտքի հետ: Ես ապրում եմ, չնչում, սիրում եմ ու ատում, և կը դալ ժամանակ, երբ ես չեմ սիրի, չեմ ատի, չեմ ապրի... և ես արդէն տեսնում էի անշունչ դիակա, տեսնում էի ինչպէս այն դադաղն են դնում, ապա ծածկում... Ու ինձ թւում էր, որ երբ սկսեն դադաղս մեխել, ես կը կենդանանամ մահի սարսափից...

Ես պէտք է մեռնեմ...

Այս խօսքերը թափանցում էին սիրտ և կրծքում ու ուտում նրան, ու կրծքիս տակ ինչ-որ այրող, մրմնջացող դատարկութիւն էի զգում, դատարկութիւն, որ բանտարկեալի շղթաներից էլ ծանր ու մաշող է:

Իսկ հարեան սենեակում անհանգիստ լալիս էր երեխան... Նա նոր է աշխարհ մտել, նա դեռ չէ զգում, որ ապրում է, բայց և՛ նա կը մեռնի: Ուրեմն մենք մենակ չենք ծնւում, մեզ հետ ծնւում է և՛ մեր մահը: Եւ նա—այդ դաժան, անողոր մահը միշտ հետևում է մեզ, երբ մենք ժպտում ենք, տխրում, ծիծաղում, լալիս ենք, արթուն, քնած: Նա միշտ մեր մէջ է նստած, ամեն մէկն ունի իր մահը: Եւ մահը այն չէ, երբ մեր մարմինը սառչում է, դիակ դառնում, ոչ, մենք ամեն մի վայրկեան մեռնում ենք: Մեր սրտի ամեն մի բաբախումը, մեր ամեն մի շարժումը, ամեն մի շունչը, հայեացքը, դա մահուան շունչն է, նրա շարժումը, նրա հայեացքն է:

Ուրեմն մենք չենք ապրում, այլ միայն մեռնում ենք, մեռնում ու միայն... մեռնում...

Իրական է միայն մահը: Նա է միայն ապրում... Իր անտեսանելի խեղդող ցանցի մէջ նա բռնած ունի ամբողջ աշխարհը, մարդկութիւնը, տիեզերքը:

Իսկ մենք պէտք է մեռնենք...

Ու այն, որ մահը անխուսափելի է, ծանրացել էր հոգուս վրայ, ճնշում էր այն... Ուղեղս կարծես ուզում էր դուրս թռչել դանդիկ... Ես ուզում էի չը հաւատալ, ուզում է փախչել այդ մտքերից... բայց չէի կարողանում... Ընկերոջս գունատ, անարիւն դէմքը նայում էր ինձ... Եւ դու պէտք է մեռնես... ամենքը պէտք է մեռնեն: Իսկ դուքսը գիշերը իր ցուրտ ու սև երգն էր երգում, անձրևը ծեծում ու ծեծում էր պատուհանի ապակիները, սենեակում դողում էր մոմի բոցը...

Դադաղի նման տխուր էր կիսամութ, կիսամերկ սենեակը...

Եւ մօտեցայ պատուհանին: Նա դողում էր քամու ուժգին հարուածներէց: Մութ փողոցում այրուող լապտերը թափում էր իր դեղին լոյսը ապակիների վրայ, ապակիները դեղինն էին տալիս:

Ապա նստեցի աթոռի վրայ, վերաբերուն վրաս դեցի... Անցաւ մի քանի րոպէ, եւ նիրհում էի. չատ էի յոգնել անքուն դիչերներից, ջղերս թուլացել էին...

Մի ամբողջ ժամ ընկերոջս գունատ դէմքը հետևում էր ինձ. ականջիս հասնում էր փողոցի խուլ աղմուկը, երեխայի լացը, լսում էի ինչ որ վալսի լացող, հալուող, մեռնող ու կըրկին կենդանացող մեղամաղձոտ հնչիւնները: Ու չուրջս սկսեցին պտտուել ինչ որ անծանօթ կանայք սպիտակ թափանցիկ ըզգեստներով: Նրանք պտտում էին, ծիծաղում, ժպտում, գրկում էին իրար, համբուրում... Նրանք յոգնել էին, քրտնել, ծանր չնչում էի, բայց չէին դադարում պարելուց ու շարունակում էին ժպտալ, ծիծաղել: Եւ գունատ դէմքն էլ լուսւ ու մուռջ թափառում էր ամբոխի վրայ: Յանկարծ նա պտտուելով օդը՝ գրկուրուեց ցած ու սև արիւն թքելով՝ բղաւեց. — «ամենքը պէտք է մեռնեն...» և ցուրտ էին փչում այդ խօսքերը. — «ամենքը դողում էին ու պատասխանում. — «ցուրտ է, ցուրտ...»

Ու կարմիր այտերը գունատուեցին, ծիծաղը դադարեց, ամենքը կծկւում էին, կուշ գալիս: Վալսի վերջին հնչիւնը դողաց օդի մէջ, հալուեց ու մարեց: Ու չուրջս միջնեց. սպիտակ զգեստները խառնուեցին խաւարին ու անհետացան սենեակի մութ անկիւնում: Եւ միայն գունատ դէմքը դեռ սպիտակին էր տալիս խաւարի մէջ, ու հնչում էր նրա ահաւոր ձայնը — «ամենքը պէտք է մեռնեն... և անդամ մութը դողում ու սառչում էր նրա ձայնից...

Ապա ամեն բան խառնուեց իրար, և՛ գունատ դէմքը, և՛ փողոցի աղմուկը, և՛ երեխայի լացը, և եւ ընկղմուեցի ինչ որ անչօչափելի, փափուկ, սև անդունդի մէջ... Ու ամեն բան լուեց... Նիկոզոս... Նիկոզոս... Եւ աչքերս բաց արի: Ընկերս էր: Նա թոյլ ոսկրոտ ձեռներով գրկել էր բարձր ու ինձ էր նայում...

«Գիտես, Նիկոզոս, ես պէտք է մեռնեմ... Սիրտս այրւում է... այտուղ... ցնւում է», ասաց նա՝ սեղմելով կուրծքը: Նրա չրթունքները դողում էին, խոր ընկած աչքերում ինչ որ անհանգստութիւն կար, խիտ, գանդուր մազերը թափթփուել էին բարձր, սպիտակ ճակատին:

Եւ սկսեցի մխիթարել, որ նա կ'առողջանայ, որ դեռ ապրելու է, խնդրում էի, որ չը խօսէ, բփռչին արդելել է... Նա չէր պատասխանում, ու միայն ժպտում էր նրա գունատ, ա-

նարին դէմքը. չրթունքները սեղմուեցին, ու խոր ընկած պըղտոր աչքերը աւելի մթնեցին:

Անցաւ մի քանի վայրկեան, նա շարունակեց...

«Դու կարծում ես, Նիկոլոս... որ... ես վախենում եմ... մահից... Ապրելուց չէի... վախենում... ինչու պէտք է վախենամ մահից...

Նրա ձայնը թոյլ էր, խուստ, ամեն մի խօսքին նա դողում էր ամբողջ մարմնով: Ապա կարծես ինչ որ կարուեց նրա մէջ, նա գլորուեց բարձի վրայ ու սկսեց հազել. չոր ու չարագուշակ էր հնչում նրա հազը մերկ, դատարկ, ցուրտ սենեակում. դա դաժան թորախտի մահուան երգն էր, անոյժ օրդանիդմի վերջին հառաչանքները. նա դողում էր ամբողջ մարմընով...

«Ես պէտք է խօսեմ... շարունակեց նա,—ես երբէք չեմ... գանգատուել... հիւանդ եմ.—մեռնում եմ... չեմ գան... գատուում... Կեանքից պէտք է գանգատ... Իմ կեանքը ցուրտ էր... թորախտը չէ սպանում ինձ... կեանքի ցուրտը...» Հազը խնդրեց նրան, նա լռեց: Լուռ էր սենեակը:

Ես կանգնած էի շուարած, չը գիտէի՝ ինչ անեմ, նա չէր ուզում լռել. ծանր չնչելով նա յենուեց մի ձեռքով բարձին, միւսը սեղմեց կրծքին...

Նիկոլոս, ես... աղքատ էի... սիրում էի անկախութիւնը... ես... ուզում էի... կեանքը չը խնայեց ինձ... որովհետ...

Չայնը չէր հնազանդում նրան... միայն շարժում էին չրթունքները: Նա ինձ էր նայում: Անոյժ, փշրուած սրտի գանգատ էր արտայայտում նրա անարին, անկենդան դէմքը: Նրա անդոյս աչքերում ինչ որ թոյլ կրակ էր փայլում.—նա թուլացաւ, ընկաւ ու պառկեց մէջքի վրայ: Նա լալիս էր լուռ ու մունջ... Իս մօտեցայ, խնդրում էի, որ լռէ: Յանկարծ նա ցրնցուեց ամբողջ մարմնով... Փորձեց նստել, չը կարողացաւ: «Նիկոլոս... մեռնում եմ... Մայրիկս... մայրիկս... դուրս թռաւ նրա հիւանդ կրծքից մի թոյլ, խուստ, ցաւոտ ճիչ:

Նա ուշաթափուեց. արիւնը թափւում էր բերանից:

Ես կանչեցի աղախնին, խնդրեցի, որ մնայ սենեակում, ինքս բժիշկ բերելու վաղեցի: Երբ վերադարձայ, բաց արի դուռը, սենեակը մութն էր, մօմը այրուել էր, հանգել, Աղախինը հեռացել էր սենեակից՝ վախենալով մենակ մնալ մեռնողի հետ: Ես իսկոյն լուցկի վառեցի, մօմի մի կտոր դրայ ու լուսաւորեցի սենեակը: Բժիշկն սկսեց քննել... «Վախճանուել է», ասաց նա մի րոպէ լուռութիւնից յետոյ...

Ընկերս անշունչ ընկած էր անկողնում. նրա փոս ընկած,

գունատ աչախն արցունքի մի կաթիլ էր դողում... դա նրա
դառն, դողդոջուն գանգատն էր... շրթունքներն արիւնոտ էին...

Իսկ դուրսը գիշերային ցրտի մէջ իր սև երգն էր երգում
ցաւազար աշունը և թափելով սառը արցունքները ապակիների
վրայ՝ ծեծում ու ծեծում էր նրանց, կարծես ասում լինէր.
«Ե՛ր դու պէտք է մեռնես... ամենքը պէտք է մեռնեն...»

Սենեակին աւելի տխուր, աւելի ցուրտ էր...

ՆԻԿ. ԱԻԵՏԵԱՆ.